

1
ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

- Ընթացիկ հաշվետվություն
- Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն
- Տարեկան հաշվետվություն

**« ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ » բաց բաժնետիրական ընկերություն,
«ԵՈԳ» ԲԲԸ**

թողարկողի ֆիրմային անվանումը (անունը, ազգանունը)
Բաց բաժնետիրական ընկերություն

կազմակերպական - իրավական ձևը
ք.Երևան 0023, Արշակունյաց, 12 հեռ. 58-66-18, ֆաքս 52-57-13

գտնվելու վայրը, հասցեն, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլ-փոստ և այլն)

N 3 31 .03. 2011թ.

հաշվետվության համարն ու ամսաթիվը

տեղաբաշխված արժեթղթերի դասը`	սովորական
արժեթղթերի քանակը`	10.348.896 հատ
արժեթղթերի անվանական արժեքը(արժույթը)`	1000

«Մենք` ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը»:

ստորագրող անձինք` Ազատուհի Մակարյան	զլխ.հաշվապահ		31.03. 2011թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)`

Գազիկ Կաֆյան	զլխավոր տնօրեն		31 .03. 2011թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

« ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ » ԲԲԸ

Տարեկան հաշվետվություն

2010թ

Հասցե	ք.Երևան 0023, Արշակունյաց փ, 12
Հեռախոս	58-66-18, 52-53-21
Ֆաքս	52-57-13
Էլփոստ	Info@yerjewel.com
Ինտերնետ կայք	www.yerjewel.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

- Կառավարման մարմինների հայտարարությունը -էջ 4
- Տարեկան զեկույց 2010թ. ընթացքում Ընկերության կողմից իրականացված գործունեության վերաբերյալ --էջ 5
- Ընկերության գործունեության վերաբերյալ տեղեկություններ- -էջ 8
- Տեղեկություններ Ընկերության նախատեսվող գործունեության վերաբերյալ--էջ 10
- Ընկերության ֆինանսական վերլուծություն 2010թ.- էջ 14
- Ֆինանսական կայունության վերլուծություն --էջ 16
- Հաշվեկշռի իրացվելիության վերլուծությունը ---էջ 18
- Շրջանառու միջոցների շրջանառելիության վերլուծություն --էջ 19
- Հարկային պարտավորություններ 2010թ. «ԵՈԳ » ԲԲԸ --էջ 20
- Անկախ աուդիտորական եզրակացություն --էջ 21
- Տարեկան ֆինանսական հաշվետվություն

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ գլխավոր տնօրեն՝ Գագիկ Կաֆյանը գլխավոր հաշվապահ՝ Ազատուհի Մակարյանը սույնով հայտարարում ենք այն մասին, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները, զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է ընկերությունը:

Գլխավոր տնօրեն

Գագիկ Կաֆյան

Գլխավոր հաշվապահ

Ազատուհի Մակարյան

Տարեկան զեկույց

**2010թ. ընթացքում Ընկերության կողմից իրականացված
գործունեության վերաբերյալ
Ձեկուցող՝ «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ գլխավոր տնօրեն,
Գագիկ Կաֆյան**

Ստորև ներկայացնում ենք «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-ի 2010թ. ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն:

2010 թվականի ընթացքում «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ արտադրանքի, ապրանքների և ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 57 973,0 հազ. դրամ, որի դիմաց իրացման ծախսերը կազմել են 11 454,0 հազ. դրամ, նախորդ տարվա 16 097,0 հազ. դրամի դիմաց, իսկ վարչականառավարչական ծախսերը կազմել են 117 747.00 հազ. դրամ, նախորդ տարվա 108 859.00 հազ. դրամի դիմաց:

2010 թվականի ընթացքում ոսկու գների կտրուկ տատանումները և զգալի աճը կրճատել է գնորդների կողմից պատվերները, որի արդյունքում զգալի նվազել է արտադրանքի իրացումից հասույթը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, գործառնական այլ եկամուտներից հասույթը նույնպես զգալիորեն նվազել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ :

2010 թվականի ընթացքում ձեռնարկվել են միջոցներ անարդյունավետ ծախսերի կրճատման վերաբերյալ, մասնավորապես կրճատվել է գովազդի ծախսերը: Բնական է, ընկերության գործունեության ոլորտը ենթադրում է, որ գովազդի ծախսերը պետք է լինեն հիմնական ծախսային հոդվածներից մեկը, սակայն ելնելով առկա ֆինանսական իրավիճակից աշխատում ենք գտնել գովազդի ավելի քիչ ծախսատար տարբերակներ, օգտագործել ինտեռնետի հնարավորությունները:

Նկատի ունենալով վերը նշվածը ընկերությունը 2010 թվականի տնտեսական գործունեության արդյունքում հաշվետու ժամանակաշրջանի վնասը կազմել է 215 028.0 հազ. դրամ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 42 825 հազ. դրամ վնասի դիմաց:

Ընկերության վնասը հիմնականում պայմանավորված է ոսկու գների կտրուկ տատանումներով: Տարին ճգնաժամային է ամբողջ աշխարհի համար և մենք չենք կարող

անմասն մնալ դրանից: Պետք է հիշել, որ պատմականորեն ամեն մի ճգնաժամին հաջորդում է տնտեսական վերածնունդ: Թե ինչքանով մեզ կհաջողվի վերադասավորել մեր ուժերը, օգտվելով իրավիճակից, նոր շուկաներ մտնելու համար, ամրապնդվելու արդեն ունեցած շուկաներում, պաշտպանել մեր արտադրողին, օգնել վաճառողին և վերավաճառողին՝ կախված կլինի ինչպիսի ձեռք բերումներով կամ կորուստներով դուրս կգա ճգնաժամից մեր ըկերությունը: Ներկայացված զարգացման ծրագիրը իր շեշտադրումներով կարող է հանդիսանալ հիմնարար՝ ճգնաժամին հակազդելու համար: Սա պետք է անել շտապ, ժամանակ չկորցնելով:

Բոլորիս հայտնի է, որ հունքի արժեքը ոսկերչության և ադամանդագործության մեջ հիմնական ծախսային տարրն է ինքնարժեքի ձևավորման գործընթացում: Անհրաժեշտ է ձևավորել ոսկերչական արտադրությունը թանկարժեք մետաղներով ապահովելու խնդիրը:

Ոսկու գնի կտրուկ տատանումների հետևանքով ռիսկերի կառավարման հնարավորությունը նվազում է, որի արդյունքում ոսկերչական իրերի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների շրջանակը կտրուկ նվազում է: Սակայն «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ, հիմնվելով ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՍՈՆ» ԲԲԸ-ի հզորությունների և ճշգրիտ սարքավորումների տեխնիկական հզորությունների վրա, կատարում է կոնստրուկտորատեխնոլոգիական մշակման, նոր ոսկերչական իրերի ստեղծման և արտադրությունում ներդնելու ուղղությամբ աշխատանքներ՝ միաժամանակ ապահովելով շուկայի մարկետինգային ուսումնասիրություններ և նոր գնորդների հայտնաբերում: Երկու ընկերությունների համատեղ գործունեության արդյունքում ձևավորվել է առանձնահատուկ ձեռագրի ոսկերչական իրերի շուկա, որը պահպանումը Ընկերության գերակա խնդիրն է:

2010 թ. Ընկերությունում իրականացրել է ստուգում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի գնահատման և ֆինանսական վերահսկողության վարչությունը: Բացի այդ ՀՀ մշտապես գործող ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի համապատասխան արձանագրության, ՀՀ Վարչապետի հանձնարարականի, ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման պետի հրամանի հիման վրա ստեղծված աշխատանքային խումբը իրականացրել է Ընկերության հաշվեկշռում հաշվառված ակտիվների գույքագրման աշխատանքներ: Այս գործընթացների արդյունքով, ՀՀ էկոնոմիկայի նախարարության առաջարկով, Ընկերությունը մշակել և ներկայացրել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝

1. անհրաժեշտ միջոցառումների ծրագիր , որը մասնավորապես ներառում է
 - Ընկերությունում օգտագործման համար ոչ պիտանի, ինչպես նաև ֆիզիկապես մաշված գույքի դուրս գրման և / կամ / օտարման աշխատանքների իրականացում
 - Թանկարժեք մետաղների շուկայական գների փոփոխությունների հետ կապված «Թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի և թանկարժեք քարերի վերագնահատման կարգի» մշակման, սահմանված կարգով հաստատման և հաշվապահական հաշվառման քաղաքականությունում կիրառման աշխատանքների իրականացում
 - հիմնական միջոցների և արագամաշ առարկաների վերագնահատման և օգտակար ծառայության ժամկետների վերանայման աշխատանքների իրականացում

2. «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ –ն 2011- 2013 թվականների ֆինանսատնտեսական գործունեության Գործարար Ծրագիր, որի առանցքային դրույթներից է Ընկերության սեփականաշնորհման գործընթացը:

Գտնում ենք, որ Ընկերության համար կիրառելի են սեփականաշնորհման երեք հնարավոր տարբերակ՝

ա/. Միաձուլել «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ և Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ , կիրառելով ուղղակի վաճառքի եղանակը նախապես հայտնի գնորդի՝ Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ը:

բ/. «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ-ը կոնցեսիա հանձնել Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ը:

գ/. Արժեթղթերի մի մասը, մինչև 30 % տրամադրել ուղղակի վաճառքի եղանակով նախապես հայտնի գնորդի՝ Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ը:

Մնացած արժեթղթերը հանել ազատ վաճառքի

Ընկերության հիմնական նպատակն է՝

2010 թվականին և հաջորդ տարիների ընթացքում նշված հզորությունների առավելագույն օգտագործմամբ նվազեցնել արտադրական ծախսերը, կրճատել աշխատատարությունը, փոփոխել արտադրական կառուցվածքը, որոնց շնորհիվ իջեցնել արտադրանքի ինքնարժեքը՝ ապահովելով բարձր շահութաբերություն:

Ընկերության գործունեության վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝ պերճանքի առարկաների, ոսկերչական իրերի և թանկարժեք զարդեղենի, ժամացույցների, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, կիսաֆաբրիկատների արտադրություն և վաճառք, նոր տեխնոլոգիաների մշակում, մասնագետների ուսուցման, վերապատրաստման, ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպում:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10 348 896 000 դրամ, որը կազմում է 10 348 896 հատ սովորական անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1000 դրամ: Բոլոր 10 348 896 բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից, ընդ որում 8 279 117 սովորական անվանական բաժնետոմսեր (80 տոկոսը) համարվում են պետական սեփականություն (տնօրինվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից), իսկ 2 069 779 սովորական անվանական բաժնետոմսեր (20 տոկոսը) սեփականության իրավունքով պատկանում են մասնակի անհատույց սեփականաշնորհման մասնակիցներին:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է, ընդհանուր ղեկավարումն իրականացնում է տնօրենների խորհուրդը, իսկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գլխավոր տնօրենը:

Ընկերության արտադրության ուղղություններն են՝

- ոսկերչական իրերի պատրաստում և վաճառք;
- ոսկյա ժամացույցների(նաև թանկարժեք քարերով) պատրաստում և վաճառք;
- թանկարժեք և գունավոր մետաղներից մեդալների, հուշամեդալների պատրաստման պատվերների կատարում;
- ոսկերչական արտադրության սարքավորումների, հանդերձանքի, գործիքների պատրաստում և վաճառք;
- ծառայությունների մատուցում ;

Ընկերությունը բյուջեյի, սոցապի նկատմամբ պարտավորությունները կատարում է ժամանակին:

Ընկերության կառավարման մարմինների վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության կանոնադրությամբ սահմանված Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը և Ընկերության գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը: Ընկերության կառավարմանը մասնակցող անձինք են՝ Գագիկ Կաֆյանը (գլխավոր տնօրեն), Ազատուհի Մակարյանը (գլխավոր հաշվապահ):

Ընկերության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը

Ընկերության գործնեության հիմնական ուղղություններն են՝

1. ոսկերչական իրերի նոր նմուշների մշակում, դրանց մոդելների և նմուշների պատրաստում;
2. ժամացույցների իրանների դիզայնի և համապատասխան կոնստրուկցիաների մշակում;
 - ոսկերչական արտադրության սարքավորումների, գործիքների մշակում և արտադրությունում ներդնում;
 - ոսկերչական իրերի պատրաստմանն անհրաժեշտ հանդերձանքի, հարմարանքների նախագծում և ներդնում;
 - շքանշանների, մեդալների, հուշամեդալների արտադրության նախապատրաստում;
 - նոր տեխնոլոգիաների մշակում և ներդնում;
 - մարքեթինգային հետազոտության և պատվերների փաթեթի ապահովում:

Տեղեկություններ Ընկերության նախատեսվող գործնեության վերաբերյալ

2010 թվականին նախատեսվող աշխատանքներ.

- 50 նոր ոսկերչական իրեքիտադրության համար անհրաժեշտ հանդերձանքի մշակում և պատրաստում,
- 5 նոր ժամացույցների արտադրության համար անհրաժեշտ հանդերձանքի մշակում և պատրաստում,
- 10-12 տիպի հոբելյանական մեդալների, հուշամեդալների, պետական շքանշանների և մեդալների հանդերձանքի մշակում և պատրաստում,
- արույրից և ցամից պատրաստված դետալների խոշոր թողարկման համար անհրաժեշտ հանդերձանքի մշակում և պատրաստում: .

Ընկերության արտադրանքի սպառման հիմնական շուկաներն են հանդիսանում՝

- Ռուսաստանի Դաշնություն
- Ղազախստան
- Մոլդովա
- Գերմանիա
- Թուրքմենիա
- ԱՄՆ

Նշված շուկաներում զբաղեցրած դիրքերը ամրապնդելու և հետագա զարգացման համար անհրաժեշտ է ապահովել շուկայում բարձր պահանջարկ ունեցող տեսականու արտադրությունը: Տվյալ պահին թվարկված բոլոր շուկաներում բարձր պահանջարկ ունեն թեթև քաշ ունեցող ոսկերչական իրերը, ինչպես նաև սպիտակ ոսկյա իրերը թանկարժեք քարերով՝ հատկապես շատ քանակությամբ: Դիրքերը ամրապնդելու գրավական է համարվում պատվերների կատարման ժամանակահատվածի շարունակական նվազեցումը:

Բոլոր շուկաներում, ինչպես նաև կազմակերպվող տարբեր ցուցահանդեսներում լայն ներկայացվում և ակտիվ մասնակցություն են ունենում Հոնկոնգի և Չինաստանի տարեց տարի զարգացող արտադրողները: Ի շնորհիվ ցածր աշխատանքային ծախսումների՝ օրինակ մեկ թանկարժեք քարի ներդրման արժեքը կազմում է 0.10 ԱՄՆ դոլար, նրանք առաջարկում են էժան և բարձր պահանջարկ ունեցող իրեր:

Հարկ է նշել, որ որակական հատկանիշներով այդ արտադրանքը զիջում է Ընկերության արտադրանքին: Ինչ վերաբերվում է Ընկերության արտադրանքի վերջնական սպառողներին, ապա նրանք հիմնականում հանդիսանում են նախկին ԽՍՀՄ քաղաքացիների, որոնք այժմ բնակություն են հաստատել այլ երկրներում:

Ուսումնասիրելով արտաքին շուկաներում ստեղծված իրավիճակն ու վերլուծելով տարբեր տոնավաճառներում մասնակցության արդյունքները, կարելի է արձանագրել, որ այժմ

Ընկերության համար ռազմավարական նշանակություն է ձեռք բերում նախկին ԽՍՀՄ տարածքում դիրքերի ամրապնդումը և վաճառքի ավելացումը: Ի շնորհիվ շուկայում պահպանվող դիրքերի և Ընկերության առևտրային նշանի (բրենդի) հայտնի լինելուն, անհրաժեշտ է մաքսիմալ կերպով օգտագործել իրավիճակը՝ զուգահեռաբար տանելով աշխատանքներ այլ շուկաների հայթայթման և պահպանման գործում: Առանձին կետով հարկ է նշել, որ տվյալ մրցակցային պայմաններում հատուկ նշանակություն է ձեռք բերում ժամկետների և որակի պահպանումը:

Ընկերության արտադրանքի արտահանման հիմնական միջոցներն են.

- 1/ Ավիաուղիները
- 2/ Սուրհանդակային ծառայությունները
- 3/ Բեռնափոխադրող կազմակերպությունները:

Ընկերության արտադրանքը նախատեսված է միջին և բարձր խավի սպառողների համար: Այս արտադրանքը չունի տարիքային և սեռական սահմանափակում: Չնայած այն հանգամանքին, որ այն չի ներկայացնում կենսական անհրաժեշտություն, այն հանդիսանում է գեղեցկության և շքեղության խորհրդանիշ ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց համար: Ելնելով շարունակաբար բարդացող մրցակցային պայմաններից, անհրաժեշտ է դառնում ընդլայնել սպառողների ծավալը՝ ներգրավելով նաև բնակչության այն մասը, որն ունի կայուն, սակայն միջինից ցածր եկամուտ: Դրա հիմնական միջոց է հանդիսանում թեթև քաշով և հետևաբար հարաբերական ցածր գներով, իրերի արտադրությունը:

Ներքին շուկայում Ընկերության հիմնական մրցակիցներն են հանդիսանում ոսկու վաճառքով զբաղվող խոշոր խանութները, ինչպես նաև Երևան քաղաքի տարբեր շրջաններում տեղաբաշխված ոսկու շուկաները: Մրցակիցների կողմից մրցակցության հիմնական միջոցներ են հանդիսանում ցածր գինը և ակտիվ գովազդը: Արտաքին շուկայում Ընկերության հիմնական մրցակիցներ են հանդիսանում.

1. ՌԴ ներկայացնող մի քանի խոշոր և բավականաչափ հայտնի ընկերություններ, մասնավորապես՝ «Էստետ», «Ռուսսկիե սամոցվետի» և այլն: Ըստ առկա տեղեկատվության, «Էստետ» ֆիրման կատարում է պատվիրված ապրանքի մատակարարումը պատվերը տեղադրելուց 20 օր հետո, ինչը հանդիսանում է չափազանց արդյունավետ աշխատանքի ոճ և համարվում է պատվերների թվի աճի հիմնական գրավական:

2. Ուկրաինական «Կիևի Ոսկերչական Գործարանը», Ղազախստանը ներկայացնող «Ալտին» ֆիրման և այլն:

3. Թուրքական արտահանողները, որոնք ի շնորհիվ էժան աշխատուժի կարողանում են առաջարկել ցածր գներ:

4. Չինական արտադրողները, որոնք օգտվելով էժան աշխատուժից, ապահովում են տեխնիկապես բարդ իրերի արտադրությունը՝ միաժամանակ սահմանելով նրանց համար հարաբերական ցածր գներ: Հարկ է նշել, որ չինական արտադրանքի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ որակական հատկանիշներով նրանք զիջում են վերը շարադրյալ արտադրողների արտադրանքին:

5. Իտալական արտադրողները, որոնք ի շնորհիվ արտադրանքի բարձր որակի և հատկապես դիզայնի զբաղեցնում են համաշխարհային շուկայում խոշոր նիշ:

Մեծածախ առևտրով զբաղվող հաճախորդներին Ընկերության մրցակիցների կողմից առաջարկվում են համագործակցության ճկուն տարբերակներ՝ սկզբնական փուլում կանխավճարային պայմաններով, հետագայում «վճարումը ապրանքը ստանալիս» և «ապառիկ» հիմունքներով: Տվյալ պայմաններում հետզհետե դժվարանում է մրցակցել արագ զարգացող չինական արտադրողների հետ:

Ընկերությունն այսօր հանդիսանում է մեդալների և հուշամեդալների միակ արտադրողը ներքին շուկայում: Տվյալ ոլորտը կարող է նաև շահավետ լինել Ընկերության համար արտաքին շուկայում որակական և գնային ճիշտ քաղաքականության մշակման դեպքում:

Ընկերության գործունեության վրա հնարավոր է բացասական ազդեցություն ունենալ.

- Ընկերության կողմից տեսականու նորացման և թարմացման ուշացումը
- Գների կտրուկ աճի դեպքում
- Համաշխարհային շուկայում ոսկու գների կայունության դեպքում ազգային տարադրամի շարունակական արժևորումը
- Գնային սխալ քաղաքականության իրականացում
- Ժամկետների խախտում
- Գովազդի բացակայություն
- Հարկային օրենսդրության կտրուկ փոփոխություններ

Մարքեթինգային ուսումնասիրությունների բացակայությունը

Ամենակարևորը - դա ավանդական շուկաների պահպանումն է և նոր շուկաների հայթհայթումն է: Սրա հետ կապված կուզենայի նշել, որ արտադրողները առևտրային ցանցին ոսկերչական իրերը որպես կանոն տրամադրում են վճարման տարեկետման իրավունքով, սա առավել ակտուալ է ներկայիս ֆինանսատնտեսական իրավիճակում:

Արտադրողներին էլ որպես կանոն տրամադրվում է կոնսիզնացոն եղանակով և շուկայական գնից ցածր գնով: Այստեղ մեծ է բանկերի դերը, հաշվի առնելով հեյջինգի (ապահովագրման) մեխանիզմի կիրառումը: Պետք է ձգտենք ներդնել այս մեխանիզմը, ներգրավել մեր բանկերին, իհարկե ՀՀ ԿԲ համակարգող դերակատարությամբ:

Այս աշխատածևի կիրառման համար անհրաժեշտ պայման է տեղական ոսկիարդյունահանող ձեռնարկությունների զարգացումը:

Մեր ներքին աշխատանքում պետք է ապահովենք մարքեթինգի ծառայության կողմից շուկաների մանրակրկիտ ուսումնասիրությունը և վերլուծությունը, հիմնվելով դրա վրա 2010-2011 թ.թ. հասնենք տեսականու աճի՝ մինչև 150 տեսակ իրի, ըստ շուկաների, 11 նոր մեդալների կոնստրուկտորա - տեխնոլոգիական մշակում և ներդրում, 3 ժամացույցների մոդելների մշակում և ներդրում, էլեկտրոնոգիոն հարգադրոշմների արտադրության իրականացում, արտադրության դիֆերսիֆիկացիա, մասնավորապես ոչ թանկարժեք մետաղներից աքսեսուարների արտադրություն:

Եվ իհարկե, բոլոր դեպքերում, շուկայական տնտեսության պայմաններում, պետք է կարողանանք բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, ապահովել ֆինանսական ներդրումների բարձր արդյունավետությունը, աշխատել խնայողաբար, ուստի միայն այս դեպքում կկարողանանք կյանքի կոչել մեր բոլոր պլանները:

Գագիկ Կաֆյան

Գլխավոր տնօրեն

Ազատուհի Մակարյան

Գլխավոր հաշվապահ

Նկատի ունենալով 2010թ. «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ տարեկան ֆինանսական հաշվետվությունը, ներկայացնում են ընկերության 2010 թվականի տա-րեկան ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ որոշ տվյալներ.

Ընկերության ընդհանուր ակտիվները հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 4 392 513,0 հազ.դրամ, այդ թվում ոչ ընթացիկ ակտիվները 842 077,0 հազ.դրամ, ընթացիկ ակտիվները՝ 3 550 436,0 հազ.դրամ,որոնք կազմում են ընդհանուր ակտիվների համապատասխանաբար 19.17% և 80.83%-ը:

2010թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում հաշվետու տարվա վնասը կազմել է 215 028.00 հազ.դրամ:

Հաշվապահական հաշվառման կազմակերպման համար պատասխանատու է գլխավոր տնօրենը:

Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվում է 1C- Ձեռնարկություն հաշվապահական ծրագրով:

Ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ

Ամփոփ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (հազ.ՀՀ դրամ)

2010թ.

Աղյուսակ 1

Ցուցանիշի անվանումը	2010թ.
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	57 973
Իրացված արտադրանքի, ապրանքնե աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(48731)
Համախառն շահույթ (վնաս)	9 242
Իրացման ծախսեր	(11 454)
Վարչական ծախսեր	(117 747)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայություններից իրացումից շահույթ (վնաս)	(119 959)
Գործառնական այլ եկամուտներ	9 007
Գործառնական այլ ծախսեր	(19 346)
Գործառնական շահույթ (վնաս)	(130 298)
Ֆինանսական ծախսեր	-

Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս) Ընդհատվող գործառնությանը վերագրելի ո	-
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)	-
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	(84 730)
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	(215 028)
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	-
Չուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	(215 028)
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	-
Չուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	(215 028)

Ամփոփ Հաշվապահական Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ (հազ.ՀՀ դրամ)
Այդուսակ 2

Ցուցանիշի անվանումը	2010թ.
Հիմնական միջոցներ	762 582
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	14 004
Ոչ նյութական ակտիվներ	
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	584
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	-
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	64 907
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	842 077
Պաշարներ	1 010 444
Տրված ընթացիկ կանխավճարներ	11 415
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	2 435 688
Այլ դեբիտորական պարտքեր	73 198
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8 028
Այլ ընթացիկ ակտիվներ	11 663
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	3 550 436
Ընդամենը ակտիվներ	4 392 513
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	10348896
Էմիսիոն եկամուտ	-
Կուտակված շահույթ	(6 953 264)
Պահուստային կապիտալ	
Սեփական կապիտալի այլ տարրեր	
Ընդամենը սեփական կապիտալ	3 395 632
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	-
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	144 051
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	144 051
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	-
Կրեդիտորական պարտքեր գումարների գծով	845 802
Ստացված ընթացիկ կանխավճարներ	535
Այլ կրեդիտորական պարտքեր	6 384

Այլ ընթացիկ պարտավորություններ	108
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	852 830
Ընդամենը պարտավորություններ	996 881
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	4 392 513

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ տվյալներ դեկտեմբերի 31-ի դրությամբ
(հազ.ՀՀ դրամ)

Աղյուսակ

3

Ցուցանիշի անվանումը	2010
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	29 100
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(16 971)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(3 111)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(830)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	8 028

Ֆինանսական կայունության վերլուծություն

1. Ֆինանսական անկախության գործակիցը ցույց է տալիս, թե ընկերության ընդհանուր միջոցների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի հաշվին: Այլ կերպ, այն սեփական կապիտալի տեսակարար կշիռն է կազմակերպության ընդհանուր կապիտալում:

$$Q_1 = \frac{\text{Սեփական կապիտալ}}{\text{Հաշվեկշռի հանրագումար}} = \frac{3395632}{4392513} = 0,77$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 0.5:

2. Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակիցը իր իմաստով մոտ է նախորդ գործակցին և ցույց է տալիս, թե սեփական կապիտալի միավորի հաշվով որքան պարտավորություններ ունի կազմակերպությունը:

$$Q2 = \frac{\text{Սեփական կապիտալ}}{\text{Սեփական կապիտալ}} = \frac{3395632}{3395632} = 0,29$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 1:

3. **Ինքնավարության գործակիցը** ցույց է տալիս, թե կազմակերպության միջոցների, որ մասն է ձևավորվել երկարաժամկետ ներգրավված աղբյուրների հաշվին:

$$Q3 = \frac{\text{Սեփական կապիտալ} + \text{Երկարաժամկետ պարտավորություններ}}{\text{Հաշվեկշռի հանրագումար}} = \frac{3539683}{4392513} = 0.81$$

Այս գործակիցը ավելի մեղմ է, քան ֆինանսական անկախության գործակիցը, դրա իջեցումը դիտվում է որպես բացասական երևույթ, քանի որ իր միջոցների ֆինանսավորման համար արդեն սկսել է ներգրավել միջոցներ կարճաժամկետ հիմունքներով:

4. **Գործող կապիտալ:** Այն ցույց է տալիս, թե ընթացիկ ակտիվների, որ մասն է ապահովված սեփական կապիտալով և երկարաժամկետ պարտավորություններով կամ երկարաժամկետ հիմունքներով ներգրավված միջոցների որ մասն է ուղղված ընթացիկ ակտիվների ֆինանսավորմանը:

$$Q4 = \text{Ընթացիկ ակտիվներ} - \text{Կարճ պարտավորություններ} = 3550436 - 852830 = 2697606$$

5. **Ընթացիկ ակտիվների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից:** Այն ցույց է տալիս, թե ընկերության ընթացիկ ակտիվների, որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և երկարաժամկետ պարտավորությունների հաշվին:

$$Q5 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Ընթացիկ ակտիվներ}} = \frac{2697606}{3550436} = 0,76$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0,1:

6. **Պաշարների գործող կապիտալով ապահովվածության գործակից:** Այն ցույց է տալիս ընկերության ապրանքանյութական պաշարների, որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և երկարաժամկետ պարտավորությունների հաշվին:

$$Q6 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Պաշարներ}} = \frac{2697606}{1010444} = 2.67$$

7. **Սեփական կապիտալի մանրայնության գործակից:** Այն ցույց է տալիս, թե ընկերության սեփական կապիտալի հաշվին ձևավորված միջոցների, որ մասն է գտնվում շարժունակ (մոբիլ) վիճակում:

$$q7 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Սեփական կապիտալ}} = \frac{2697606}{3395632} = 0,79$$

Չաշվեկշռի իրացվելիության վերլուծությունը

Իրացվելիությունը բնութագրող ցուցանիշներն են.

1. **Ընթացիկ իրացվելիության գործակից:** Այն ցույց է տալիս ընկերության կարճաժամկետ պարտավորությունների ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը և որոշվում է ընթացիկ ակտիվների և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությամբ:

$$q8 = \frac{\text{Ընթացիկ ակտիվներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}} = \frac{3550436}{852830} = 4,16$$

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը 2 է:

2. **Արագ իրացվելիության գործակից:** Այն ցույց է տալիս կարճաժամկետ պարտավորությունների առավել իրացվելի ակտիվներով ապահովվածության աստիճանը և որոշվում է առավել իրացվելի ակտիվների (դրամական միջոցներ, կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ, դեբիտորական պարտք) և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությամբ:

$$q9 = \frac{\text{Արագ իրացվելի ընթացիք ակտիվներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}} = \frac{2477679}{852830} = 2,90$$

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը 1 է:

ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. **Ակտիվների շրջանառության գործակից:** Այս ցուցանիշը բնութագրում է համախառն ակտիվների շրջանառության արագությունը:

$$Q_{10} = \frac{\text{Արտադրանքի իրացումից հասույթ}}{\text{Ակտիվների միջին մեծություն}} = \frac{57973}{4517001} = 0.013$$

2. **Ընթացիկ ակտիվների շրջանառության գործակից:** Այս ցուցանիշը բնութագրում է ընթացիկ ակտիվների շրջանառության արագությունը:

$$Q_{11} = \frac{\text{Արտադրանքի իրացումից հասույթ}}{\text{Ընթացիկ ակտիվների միջին մեծություն}} = \frac{57973}{3670839} = 0.004$$

3. **Պատրաստի արտադրանքի շրջանառության գործակից:** Այս ցուցանիշը բնութագրում է պատրաստի արտադրանքի շրջանառության արագությունը:

$$Q_{12} = \frac{\text{Իրացված արտադրանքի արտադրական արժեք}}{\text{Պատրաստի արտադրանքի միջին մեծություն}} = \frac{48731}{671001} = 0.073$$

Ստորև ներկայացվում է «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի կողմից 2010թ. ընթացքում հաշվարկված և պետ. բյուջե վճարված գումարներն, ըստ հարկատեսակների.

Հարկային պարտավորություններ 2010թ. «ԵՈԳ» ԲԲԸ

	հաշվ.	վճար.	
ԱԱՀ	9 034.0	9 034,0	
Ե/հ	10 547.8	10 547,8	
Շ/հ 1% կանխավճար	1 316.0	1 316.0	
Գ/հ	462.0	462.0	
Ընդամենը	21 359.8	21 359.8	
Սոցապ վճար	18 751.8	18 036.0	
Հ/հ	754.0	754.0	
Բնապահպ.	33.8	25.3	
Ընդամենը	19 539.6	18 815.3	
Ամբողջը	40 899.4	40 175.1	

Գլխավոր տնօրեն

Գագիկ Կաֆյան

Գլխավոր հաշվապահ

Ազատուհի Մակարյան



Երևան, Գ. Լուսավորչի 15/1
հեռ. (37410) 58-07-45
ֆաքս. (37410) 52-69-41
E-mail: hayaudit@hayaudit.com
URL: www.hayaudit.com

15/1 G. Lusavorich str., Yerevan
tel. (37410) 58-07-45
fax (37410) 52-69-41
E-mail: hayaudit@hayaudit.com
URL: www.hayaudit.com

03 N 2-02

«04» 02 2011 թ.

Ա ՈՒ Դ Ի Տ Ո Ր Ա Կ Ա Ն Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ բաժնետերերին

Մենք առողիտի ենք ենթարկել «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 31-ը դեկտեմբերի 2010թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները (այսուհետև՝ ֆինանսական հաշվետվություններ):

Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է Ընկերության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված առողիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:


Մենք առողիտն անցկացրեցինք Հայաստանի Հանրապետության առողիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք առողիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ուղղամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով: Առողիտորական աշխատանքները ներառում են քեստային հիմունքներով այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը և բացահայտումները: Առողիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, Ընկերության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված առողիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

1. Մենք չենք հետևել Ընկերության 2010թ. իրականացված ապրանքանյութական արժեքների մնացորդների գույքագրման գործընթացին, քանի որ գույքագրումը կատարվել է մինչև առողիտի պայմանագրի կնքումը:
2. Սեփականության իրավունքով Ընկերությանը պատկանող 1918243.0 հազ.դրամ սկզբնական արժեք ունեցող հիմնական միջոցներից 238532.6 հազ.դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցները 31.12.2010 թ. դրությամբ հաշվեկշռային արժեք չունեն :

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները, բացի վերը նշված հանգամանքների հետևանքներից, մնացած բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ առ 31-ը դեկտեմբերի 2010թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքները, սեփական կապիտալում փոփոխություններն ու դրամական հոսքերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

Տնօրեն՝

Աստիտոր



[Handwritten signature]

[Handwritten signature]

Հ. Գրիգորյան

Մ. Ստեփանյան